ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«25» ապրիլի 2019 թվականի N: 143-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՀՈՎԻՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ՀԵՐԻՔՆԱԶ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի «ա» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 32-րդ և 46-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N113-Ն հրամանով հաստատված «Հայաստանի Հանրապետության «Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի» 4-րդ կետի 4-րդ ենթակետի, 11-րդ, 11.1-ին, 13-րդ, 15-րդ, 17-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հովիտի միջնակարգ դպրոց»

պետական ոչ առևտրային կազմակերպության ծնողական խորհրդի 2019 թվականի ապրիլի 5-ի թիվ 8 արձանագրությունը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ժամկետը լրանալու կապակցությամբ դադարեցնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հովիտի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) անդամ՝ ծնողական խորհրդի կողմից առաջադրված Հերիքնազ Խաչատրյանի լիազորությունները:

2. Խորհրդի անվանական կազմում երեք տարի ժամկետով հաստատել ծնողական խորհրդի կողմից առաջադրված Հերիքնազ Խաչատրյանին:

Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է